ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

/2008թ.-ի ընթացքում մարդկանց շահագործման՝ «Թրաֆիքինգի» դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացված աշխատանքների մասին/

ՀՀ քրեական օրենսգրքի 132, 132[1] հոդվածներ

«Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը»

«Մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձեւերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելը կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կամ պահելը»

2008թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի **132, 132[1]** հոդվածների հատկանիշներով ՀՀ ոստիկանությունում իրականացվել է վարույթ 12 քրեական գործերով կամ 15 դեպքերով: Եվս 1 քր. գործով վարույթ է իրականացվել ՀՀ ԱԱԾ-ում: Նշված գործերից 2-ը՝ նախորդ տարիներին հարուցված, կասեցված այնուհետև 2008թ.-ին վերսկսված գործեր են, 10-ը /13 դեպքերը/ 2008թ.-ին հարուցված քր. գործեր, իսկ 1 քր. գործը 2008թ.-ին հարուցվել է ՀՀ քր. օր.-ի **166** հոդվածի «անչափահասին մուրացկանության մեջ ներգրավելու» հատկանիշներով, այնուհետև վերավորակվել է **132[1]** հոդվածի:

Նշված վերավորակված քր. գործը վերաբերվել է Երևանի հատուկ դպրոցներից մեկի փոխտնօրենի կողմից նույն դպրոցի սաներին մուրացկանության մեջ ներգրավելու՝ շահագործելու դեպքերին:

Վերսկսված 1 քր. գործը վերաբերվել է 1998-2004 թվականների ընթացքում ԱՄԷ-ում և Թուրքիայում ՀՀ քաղաքացի հանդիսացող կանանց սեռական շահագործման ենթարկելու դեպքերին:

Վերսկսված 1 քր. գործ, ինչպես նաև 2008թ.-ին հարուցված 4 քր. գործեր կամ 7 դեպքերը վերաբերվել են ԱՄԷ-ում ՀՀ-ից փոխադրված կանանց սեռական շահագործմանը՝ այդ թվում 1 քր. գործը վերաբերվել է ՀՀ քր. օր.-ի 132 հոդվածի 4-րդ մասի 1 կետի հատկանիշներով կազմակերպված խմբի կողմից կատարված թրաֆիքինգի 4 դեպքերին, իսկ մեկ այլ տարևերջին հարուցված քր. գործով առայժմ տուժողներ չեն ճանաչվել և մեղադրյալներ չեն ներգրավվել:

2008թ.-ին հարուցված 3 քր. գործեր վերաբերվել են Թուրքիայում ՀՀ-ից փոխադրված կանանց սեռական շահագործմանը:

1 քր. գործով ՌԴ քաղաքացի հանդիսացող մի շարք կանայք փոխադրվել են ՀՀ և ՌԴ քաղաքացիների կողմից ենթարկվել սեռական շահագործման այլ ձևերի՝ տրամադրվել են գիշերային ակումբներին որպես մերկապարուհիներ:

1 քր. գործով ՀՀ քաղաքացի հանդիսացող կանայք փոխադրվել են ՌԴ Մոսկվա քաղաք և ազգությամբ հայ ՌԴ քաղաքացու կողմից ենթարկվել աշխատանքային շահագործման՝ որպես ռեստորանի մատուցողներ: Նշված գործով դեռևս մեղադրյալներ չեն ներգրավվել, տուժողներ չեն ճանաչվել, թեև 1 անձ նախնական նույնացվել է որպես զոհ և ուղղորդվել ՀԿ:

ՀՀ ԱԱԾ վարույթում գտնվող 1 գործով ՀՀ քաղաքացիները որպես շինարարներ փոխադրվել են ՌԴ Ուրֆա քաղաք և ենթարկվել աշխատանքային շահագործման: Նշված գործով նույնպես դեռևս մեղադրյալներ չեն ներգրավվել, տուժողներ չեն ճանաչվել:

1 քր. գործով ՀՀ քաղաքացին սեռական շահագործման է ենթարկվել ՀՀ տարածքում և շահագործման պահին հանդիսացել է անչափահաս:

Փաստացի 2008թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի **132, 132[1]** հոդվածների հատկանիշներով վարույթ իրականացված 13 գործերից 3-ով որպես վերջնակետ երկիր է հանդիսացել Թուրքիան, 4 քր.գործով կամ 7 դեպքով Արաբական Միացյալ էմիրությունները, 1-ով կանայք փոխադրվել են և Թուրքիա և ԱՄԷ, 2-ով Ռուսաստանի Դաշնություն, 1 գործով Հայաստանը հանդիսացել է որպես վերջնակետ երկիր ՌԴ-ից փոխադրված կանանց համար, իսկ 2 գործեր վերաբերվել են ՀՀ սահմանների ներսում իրականացված թրաֆիքինգին:

2008թ. *ՀՀ քր.օր.-ի 132, 132[1] հոդվածներով քր. գործերը <u>ըստ</u> ուղղությունների*		
Քր. գործ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր
3	**Հայաստանի Հանրապետություն**	**Թուրքիա**
4 /7 դեպք/	**Հայաստանի Հանրապետություն**	**Արաբական էմիրություններ՝**
1	**Հայաստանի Հանրապետություն**	**Թուրքիա, ԱՄԷ**
2	**Հայաստանի Հանրապետություն**	**Ռուսաստանի Դաշնություն**
1	**Ռուսաստանի դաշնություն**	**Հայաստանի Հանրապետություն**
2	**Հայաստանի Հանրապետություն**	**Հայաստանի Հանրապետություն**

Նշված 13 գործերից 9-ը կամ 12 դեպքերը վերաբերվել են այլ անձին պոռնկության մեջ ներգրավելուն, 1-ը սեռական շահագործման այլ ձևերին /մերկապարեր/, 2-ը աշխատանքային շահագործմանը և 1-ը մուրացկանության մեջ ներգրավելուն:

2008թ.	*ՀՀ քր. օր.-ի 132, 132[1] հոդվածներով քր. գործերը ըստ բնույթի*		
Պոռնկության շահագործում	Սեռական շահագործման այլ ձևեր	Աշխատանքային թրաֆիքինգ	Մուրացկանության մեջ ներգրավել
9 /12 դեպք/	**1**	**2**	**1**

ՀՀ քր. օր.-ի 132, 132[1] հոդվածներով վարույթ իրականացված 13 քր. գործերից 2008թ.-ի ընթացքում 2-ը ավարտվել են և դրանցով կայացվել է դատավճիռ, 1-ը ուղարկվել է դատարան, 2-ը կասեցվել են հանցագործություն կատարած անձի քննությունից թաքնվելու կապակցությամբ, իսկ մնացած 8 գործերի վարույթը շարունակվում է և դրանք փոխանցվել են 2009թ.:

2008թ.	*ՀՀ քր. օր.-ի 132, 132 [1] հոդվածներով քր. գործերի ընթացքը*			
Քր.գործեր	Ավարտված	Կասեցված	Դատարան	Փոխանցվել է 2009թ.
13	**2**	**2**	**1**	**8**

2008թ.-ի ընթացքում ՀՀ քր. օր.-ի 132, 132[1] հոդվածներով մեղադրանք է առաջադրվել 22 անձի, ևս 1 անձի մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 38-262, 340 հոդվածներով՝ տուժողին /թրաֆիքինգի զոհին/ կաշառք տալու մեղադրանքով:

Մեղադրվող 22 անձանցից 12-ի նկատմամբ իրականացվել է հետախուզում, իսկ 10-ը վերցվել են կալանքի: 12 հետախուզվողներից 3-ը 2008թ.-ին նույնպես հայտնաբերվել և կալանավորվել են: 22 մեղադրյալներից 4-ը 2008թ.-ի ընթացքում դատապարտվել են ՀՀ քր.օր.-ի 132, 132[1] հոդվածներով համապատասխանաբար 7 տարի 6 ամիս, 7 տարի 6 ամիս, 7 տարի և 2 տարի ազատազրկման:

31.12.2008թ.-ի դրությամբ 22 մեղադրյալներից 9 դեռ գտնվում են հետախուզման մեջ, 4-ը դատապարտվել են ազատազրկման, 4-ի վերաբերյալ գործերը ուղարկվել են դատարան, սակայն դատաքննությունը դեռ չի կայացել, մնացած 5-ով նախաքննությունը շարունակվում է:

2008թ.	*ՀՀ քր. օր.-ի 132, 132 [1] հոդվածներով մեղադրյալներ*		
Մեղադրյալ	Դատապարտված	Կալանքի տակ	Հետախուզվող
22 *որից կին-18*	**4** *որից կին-4*	**9** *որից կին-7*	**9** *որից կին-7*

Տուժող /զոհ/ են ճանաչվել՝ միջանկյալ նույնացվել են 34 անձինք որոնցից 3-ը շահագործման պահին եղել են անչափահասներ: Տուժող ճանաչված բոլոր զոհերին առաջարկվել է աջակցություն ստանալ վերականգնողական կենտրոններում: Իրենց համաձայնությունը տված 20 զոհեր ուղղորդվել են ԱՄՔՈՐ և «Հույս և օգնություն» ՀԿ-ներ:

2008թ.	*ՀՀ քր. օր.-ի 132, 132 [1] հոդվածներով զոհեր*	
Տուժող Զոհ	Անչափահաս	Ուղղորդվել են ՀԿ
34 *որից իգ. սեռի-32*	**3** *որից իգ. սեռի-1*	**20** *որից կին-20*

Տուժող ճանաչված 34 անձանցից 8-ը փոխադրվել և շահագործման են ենթարկվել Թուրքիայում, 10-ը Արաբական Միացյալ Էմիրություններում, 13-ը ՌԴ-ից փոխադրվել են ՀՀ և շահագործվել Հայաստանում, իսկ 3-ը ՀՀ-ում ենթարկվել են ներքին թրաֆիքինգի:

2008թ. ՀՀ քր.օր.-ի 132, 132[1] հոդվածներ: Տուժողներ/զոհեր ըստ ուղղությունների		
Տուժողներ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր
8	**Հայաստանի Հանրապետություն**	**Թուրքիա**
10	**Հայաստանի Հանրապետություն**	**Արաբական էմիրություններ**
13	**Ռուսաստանի դաշնություն**	**Հայաստանի Հանրապետություն**
3	**Հայաստանի Հանրապետություն**	**Հայաստանի Հանրապետություն**

Նշված բոլոր 34 զոհերը ՀՀ ոստիկանության կողմից միջանկյալ նույնացված զոհեր են, որոնք քր. գործերով ճանաչվել են տուժող: Նախնական նույնացման փուլում գտնվող մի շարք զոհեր գործով տուժողներ չեն ճանաչվել վերջիններիս բացակայության պատճառով: Նրանց վերաբերյալ տեղեկությունները փոխանցվել են ԱԳՆ:

Ընդհանուր առմամբ ՀՀ քր.օր.-ի 132, 132[1] հոդվածների հատկանիշներով 2008թ.-ի ընթացքում հետախուզում է իրականացվել 24 անձանց նկատմամբ: 01.01.2008թ.-ի դրությամբ հետախուզման մեջ են գտնվել 14 անձինք, 2008թ.-ի ընթացքում հետախուզում է հայտարարվել ևս 10-ի նկատմամբ, նույն ժամանակահատվածում հայտնաբերվել են 3-ը: 31.12.08թ.-ի դրությամբ հետախուզման մեջ են գտնվում 21 անձինք:

2008թ.	*ՀՀ քր. օր.-ի 132, 132[1] հոդվածներով հետախուզվողներ*		
01.01.08թ.-ի դրությամբ	2008-ի ընթացքում հայտարարվել է	2008-ի ընթացքում հայտնաբերվել են	31.12.08թ.-ի դրությամբ
14	**10**	**3**	**21**

ՀՀ քրեական օրենսգրքի 168 հոդված

«Երեխայի առք ու վաճառքը»

2008թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի **168** հոդվածի հատկանիշներով քրեական վարույթ է իրականացվել 3 գործերով: Որպես մեղադրյալ են ներգրավվել 5 անձինք, զոհեր են հանդիսացել 8-ը՝ բոլորը մանկահասակ: Նշված 3 գործերը վերաբերվել են որդեգրման նպատակով երեխայի առք ու վաճառքին:

2008թ.	*ՀՀ քր. օր.-ի 168 հոդված*		
Քր.գործ	Մեղադրյալ	Զոհ	Հանձնվել են
3	**5** *որից կին-4*	**8** *որից իգ. սեռի-4*	խնամակալի

ՀՀ քրեական օրենսգրքի 166 հոդված

«Երեխային հակահասարակական գործունեության կատարելուն ներգրավելը»

ՀՀ քրեական օրենսգրքի **166** հոդվածով՝ անչափահասին մուրացկանության մեջ ներգրավելու հատկանիշներով հարուցվել են քրեական 2 գործեր, որոնցից 1-ը վերավորակվել է **132[1]** հոդվածի /գործի հանգամանքների մասին նշված է տեղեկանքի սկզբնամասում/: Մնացած 1 գործով որպես մեղադրյալ է ներգրավվել է 1 անձ, տուժող են ճանաչվել 2 անչափահասներ:

2008թ.	*ՀՀ քր. օր.-ի 166 հոդված*			
Քր.գործ	Մեղադրյալ	Դատապարտված	Տուժող Զոհ	Ուղղորդվել են
1	**1** *որից կին-0*	**-**	**2** *որից իգ-0*	կրթահամալիր

ՀՀ քրեական օրենսգրքի 126 հոդված

«Մարմնի մասեր կամ հյուսվածքներ տալուն հարկադրելը»

2008 թ-ի ընթացքում ՀՀ քր. օր.-ի 126 հոդվածի հատկանիշներով հանցագործության դեպքեր չեն արձանագրվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 261, 262 հոդվածներ

«Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը»

«Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը»

ՀՀ քրեական օրենսգրքի 261, 262 հոդվածների հատկանիշներով 2008թ.-ի ընթացքում քրեական վարույթ է իրականացվել 17 գործերով, որոնցով որպես մեղադրյալ են ներգրավվել 20 անձինք:

2008թ.		*ՀՀ քր. օր.-ի 261, 262 հոդվածներ*	
Քր.գործ	Մեղադրյալ	Դատապարտվել են	Տուժող-վկա
17	**20**	**9**	**52**

17 քր. գործերից 3-ը վերաբերվել են սահմանանցման միջոցով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն նպաստելուն: 3 գործերից 1-ով կանայք կամավոր պոռնկությամբ են զբաղվել Թուրքայում, իսկ մյուս 2-ով ԱՄԷ-ում:

Անչափահասի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 261, 262 հոդվածների հատկանիշներով իրականացված հանցագործության դեպքեր 2008թ.-ի ընթացքում չեն հայտնաբերվել:

ՀՀ քր.օր.-ի 261, 262 հոդվածների հատկանիշներով հանցագործություն կատարելու համար հետախուզում է իրականացվել 8 անձի նկատմամբ: 01.01.2008թ.-ի դրությամբ հետախուզման մեջ են գտնվել 7 անձինք, 2008թ.-ի ընթացքում հետախուզում է հայտարարվել ևս 1-ի նկատմամբ, նույն ժամանակահատվածում հայտնաբերվել են 3-ը: 31.12.08թ.-ի դրությամբ հետախուզվում են 5 անձինք:

2008թ.	*ՀՀ քր. օր.-ի 261, 262 հոդվածներով հետախուզվողներ*		
01.01.08թ.-ի դրությամբ	2008-ի ընթացքում հայտարարվել է	2008-ի ընթացքում հայտնաբերվել են	31.12.08թ.-ի դրությամբ հետախուզվում են
7	**1**	**3**	**5**

2008թ.-ի ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում կատարված աշխատանքներում մեծ տեղ են զբաղեցրել ոլորտի բարելավմանն ուղղված միջոցառումները: Մասնավորապես մշակվել և թրաֆիքինգի հարցերով միջգերատեսչական խորհրդին է ներկայացվել միջոցառումների ցանկ, որը հնարավոր կդարձնի բարձրացնել թրաֆիքինգի դեմ պայքարի արդյունավետությունը: Նախապատրաստվել է ՀՀ ոստիկանապետի հրամանի նախագիծ որով հստակեցվում է թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի սպասարկման ոլորտները, ինչպես նաև կանոնակարգվում տարածքային ստորաբաժանումների գործունեությունը: Առաջարկություններ են ներկայացվել նաև ՀՀ քրեական օրենսգրքում առկա բացերն ու հակասությունները վերացնելու նպատակով: Ոստիկանության ակտիվ մասնակցությամբ ՀՀ թրաֆիքինգի հարցերով խորհրդի աշխատանքային խմբի շրջանակներում մշակվել է «Ազգային ուղղորդման մեխանիզմ»: Միջազգային կազմակերպությունների հետ փոխհամագործակցության արդյունքում նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ՝ զոհերի և թրաֆիքինգ իրականացնողների կենտրոնացված վերլուծական համակարգչային ծրագիր ներդնելու ուղղությամբ: Ակտիվ փոխհամագործակցություն է ծավալվել հասարակական կազմակերպությունների հետ: Արդյունքում՝ ոստիկանության աշխատակիցների կողմից նույնացված թվով 20 զոհեր ուղղորդվել են հասարակական կազմակերպություններ՝ հետագա աջակցություն ստանալու նպատակով: ՀՀ ԱԳՆ-ի հետ փոխհամագործակցության արդյունքում թրաֆիքինգի 1 զոհ վերադարձվել է Հայաստան՝ Արաբական Միացյալ Էմիրություններից: Մի շարք զոհերի գտնվելու վայրի մասին տեղեկություններ են տրամադրվել ԱԳՆ, որոնցով աշխատանքները շարունակվում են: 2007, 2008 թվականների ընթացքում ոստիկանության համակարգմամբ և անմիջական մասնակցությամբ ոստիկանության թվով 204 աշխատակիցների համար կազմակերպվել են «Թրաֆիքինգի» խնդիրներին վերաբերվող դասընթացներ ՀՀ 10 մարզերում և Երևան ք.-ում: 16 աշխատակիցների համար միջազգային փորձագետի ներգրավվմամբ, ինչպես նաև 4 աշխատակցի համար արտագնա դասընթացներ: Ոստիկանության աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել նաև տեղական և միջազգային խորհրդաժողովներին և հանդիպումներին: Հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության կողմից «02» շաբաթաթերթի և հեռուստածրագրի միջոցով ներկայացվել են մի շարք հաղորդումներ: Մի շարք նյութեր են տրամադրվել նաև այլ լրատվական միջոցներին:

ՀՀ Ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ